ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

12.11.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 864-Ա

«ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 229-Ն որոշումը և «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊԸ-ի տնօրեն Արամ Գասպարյանին (ՀՎՀՀ 01239095) այլ արտաքին գովազդ տեղադրելու մասին հայտը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Բավարարել «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊԸ-ի տնօրեն Արամ Գասպարյանին կողմից 01.11.2025թ. - 30.11.2025թ. ժամանակահատվածի համար ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Մաշտոցի փողոցում 36քմ. այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն ստանալու հայտը:

2. Հանձնարարարել աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ երեք օրվա ընթացքում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2025թ. նոյեմբերի 12
ք. Գորիս